

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՑ

Խորհրդային ականավոր պատմարան, ակադեմիկոս Հ. Մանանդյանը (1873—1952) ունեցել է ընդարձակ նամակագրություն: Գիտության ու մշակույթի ամենատարբեր ներկայացուցիչներին ուղղված նրա նամակներից, ցավոք, մեղ են հասել միայն առանձին միավորներ: Ընթերցողների ուշադրությանը ստորև ներկայացվող Հ. Մանանդյանի նամակների հասցեատերերն են հայագետ, մանկավարժ, Գեորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը (1853—1920), բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (1869—1923), Լադարյան ճեմարանի պրոֆեսոր, ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանը (1858—1912), գրող, լրագրող, հասարակական գործիչ Արշակ Չոպանյանը (1872—1954) և լեզվաբան, Լադարյան ճեմարանի դասախոս, Երևանի ու Մոսկվայի համալսարանների պրոֆեսոր Հովսեփ Կուսիկյանը (1890—1964):

Հրապարակվող նամակներից արժեքավոր են հատկապես Հ. Թումանյանին ուղղված նամակները, որոնք վկայում են ժամանակի այդ երկու նշանավոր մտավորականների հոգեհարազատությանն ու մտերմությունը: Այդ նամակները փաստում են նաև Հ. Մանանդյանին ուղղված Հ. Թումանյանի ցայսօր անհայտ նամակների գոյության իրողությունը:

Ուշադրության արժանի է նաև Գր. Խալաթյանցին գրված նամակը 1911 թ. Բաքվում փաստաբանությունը դրադվող Հ. Մանանդյանի համար հնարավորություն է ստեղծվում պաշտոնավարելու Լադարյան ճեմարանում և դրադվելու գիտամանկավարժական գործունեությանը՝ ձևարանի վարչությունը նրան առաջարկում է տեղափոխվել Մոսկվա և ստանձնել Լադարյան ճեմարանի տեսչի թափուր պաշտոնը: Չնայած Մանանդյանը սիրով ընդունում է այդ առաջարկը, սակայն որոշ հանգամանքներից ելնելով՝ շուտով ստիպված է լինում հրաժարվել:

Ուշագրավ է հատկապես Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի ստորագրությամբ ուղերձն առ Ա. Չոպանյանը, նման ուղերձ բացի Ա. Չոպանյանից, ուղարկվել է սփյուռքահայ և օտար ալլ նշանավոր գործիչներին: Այնպես որ, այստեղ, որպես հասցեատիրոջ, Ա. Չոպանյանի անունը հույժ պայմանական է: Խոսքը 1922 թ. մարտի 4-ին Հայաստանի Ժողովրդական Դեմոկրատիայի խորհրդի ընդունած այն հայտնի դեկրետի մասին է, որը վերաբերում է ուղղագրական ռեֆորմին: Հայտնի է, որ հայ մտավորականության մեծագույն մասը չընդունեց այդ ռեֆորմը: Այդ պատճառով, գիտության և արվեստի ինստիտուտի ստեղծած հատուկ հանձնաժողովը (նախագահ՝ Հ. Մանանդյան) 1927 թ. փետրվարին սույն ուղերձով դիմում է հայագետներին՝ կարծիք հայտնելու հայոց լեզվի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխման վերաբերյալ կազմված համադրական աշխատակի մասին: Այս իմաստով սույն հրապարակումը հատկապես կհետաքրքրի հայոց լեզվի պատմության և ուղղագրության հարցերով զբաղվող մասնագետներին:

Հրապարակվող նամակները փաստական արժեքավոր նյութ են պարունակում Հ. Մանանդյանի գործունեության, պատմագիտության բնագավառում կատարած աշխատանքների և ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ: Դրանք, անշուշտ, նաև ինքնակենսագրական արժեքավոր վավերագրեր են և կարող են մեծապես օգտակար լինել ականավոր պատմարանի կյանքն ու գործն ուսումնասիրողների համար:

Նամակների բնագրերը հրատարակում ենք նույնությամբ՝ առանց կրճատումների: Որոշ դեպքերում կանոնավորել ենք միայն կետադրությունը: Նամակները գրվել են 1902—1946 թթ. և պահվում են Ե. Չարենցի անվան Շիրազի համալսարանի ֆոնդերում:

№ 1

Կարապետ Կոստանյանին

21 հունիսի, 1902

Գիլիջան

Գերապատիվ հայր Կարապետ,

Ստացա Գևորգյան հոգևոր ճեմարանի վարչության № 198 (1902 թ. հուն ^{<խի>} 12) պաշտոնական գրութիւնը, որով առաջիկա ուսումնական տարւի համար նշանակել եք ինձ 15 դաս՝ 1325 ուրլի ուճիկով: Ուրեմն՝ նախկին տարվա 1575 ուրլի ուճիկս այժմ 250 ուրլով պակասել է:

Գիտակցելով ու զգալով, որ 2,5 տարվա ուսուցչական իմ գործունեության ընթացքում¹, թե՛ իբրև ուսուցիչ ու թե՛ իբրև գիտութեան մշակ անդադար աշխատել եմ հօգուտ ճեմարանի և Մայր Աթոռի և ոչ մի կերպ չեմ արժանացել այդպիսի խիստ պատժի՝ ուճիկս այդքան կրճատելու: Լինելով այն սկզբունքին, որ ուսուցչի մի անգամ ստացած ուճիկը այլևս չպիտի պակասի, ի նկատի առնելով նաև, որ Վարչությանդ կողմից չեն գնահատվել ըստ արժանվույն իմ թե՛ նվիրաբերում ու թե՛ Ռուսաստանում ստացած «ցենս-դական» իրավունքները², դժբախտաբար ստիպված եմ մերժելու Ձեր առաջարկած պայմանները:

Գևորգյան հոգևոր ճեմարանում ուսուցչական պաշտոնս կարող եմ շարունակել միմիայն այն պայմանով, որ նախկին տարվա ուճիկս չպակասի և նոր առարկաներ չավելանան: Առարկաներից կարող եմ հանձն առնել գերմաներեն և հունարեն լեզուները և ընդհանրապես իմ արդեն ավանդած նախկին առարկաներից որևէ մեկը³:

Նոնրահաբար խնդրում եմ շուտով հայտնեք Ձեր վերջնական որոշումը, որպեսզի իմ պայմանները չընդունվելու դեպքում՝ ժամանակ ունենամ դիմելու նաև ուրիշ դպրոցական հաստատութեանց⁴:

Խորին հարգանքով
Հակոբ Մանանդյան

Կ. Կոստանյանի ֆոնդ, № 1193, Ինքնագիր:

№ 2

Հովհաննես Թումանյանին

<12 սեպտեմբերի, 1904, Վաղարշապատ>

Սիրելի՛ս, Հովհաննես

Քո բարկացած տրամադրութեամբ գրած նամակը չեմ ստացել, իսկ մյուս նամակդ, որ անվանել ես «դեսից դենից», ստացել եմ, բայց մեղավոր եմ, որ պատասխանն ուշացրել եմ: Որոշել էինք քեզ մոտ՝ հյուր գալ, սակայն այնքան ուշացանք Տփլիսում, որ այլևս դժվար էր հապաղել, ուստի և շտապեցինք էջմիածին: Հուսով եմ, որ դու կգաս էջմիածին²: Թվում է, թե Վերնապոլսում³ վերջիվերջո էջմիածնում ևս առանձին բաժանմունք է ունենալու Դերենիկն⁴ այստեղ է: Շանթն⁵ ուզում էր նույնպես այստեղ գալ: Մխիթարական է, որ լավ մարդիկ մեզ չեն մոռանում, ուստի և կամաց-կամաց սկսում եմ հավատալ, որ մենք էլ լավ մարդիկ ենք:

Համբույրներով՝ քո Մանանդյանը.

<P. S.> Սիրելի Օլիա⁶,

Ես այնպես ուզում էի Ձեզ տեսնել և այնպես հավատացած էի, որ կհաջողվի Ձեր գալը էջմիածին: Համբուրում եմ քեզ և երեսններին⁷: Բարև Հովհաննեսին: Հետո նամակ կգրեմ: Բարև Վերնատանը: Խնչ նորութիւններ Տփլիսում:

Վարիա⁸

Հ. Թումանյանի ֆոնդ, № 863, Ինքնագիր:

Սիրելի՛ Հովհաննես,

Լսել եմ, որ շարունակում ես, այն էլ շատ լուրջ, «Կովկասագիտական» ուսումնասիրություններդ։ Չեմ կասկածում, որ այդ աշխատությանդ հետեւանքը կլինի բանաստեղծական խոշոր մի երկ։ Միայն թե ե՞րբ։

Հովհաննես, որ այստեղ¹ լինելիք, գիտես ինչ «գանձեր» կգտնեիր «ВУ-КИНИСТ»-ների մոտ²։ Հիանալի ու հաղվագյուտ գրքեր կան կովկասագիտության վերաբերյալ, այն էլ խիստ էժան, գրեթե ձրի։

Սիրական էֆենդին³ արդեն պաշտոն է ճարել։ Երեակայիր մի հատ գիրք են տվել ձեռքը կովերի ու եզների մասին և հանձնարարել, որ կազմեն «Կովկասական» մի «ДОКЛАД»։ Սաքոն⁴ էլ էստեղ չէ, որ խորհուրդ հարցնե։ Մնացել է խեղճը մոլորված։

Տիր Մկրտիչը շարունակ քարոզներ է կարդում աշխարհի ունայնության մասին և մեղ միթարում։ Ինչպես տեսնում ես «Վերնատան» հյուրերը, որ անդամակցության պատվի շարժանացան, թունդ զբաղված են։

Երբեմն պատահում եմ Սաղաթելյանին⁵։ Նա իհարկե ի պաշտոնե աղաս է ունայն «զբաղմունքներից»։ Նրա հարաբերությունները Դումայի աջակողմյան պատգամավորների հետ բարեկամական են։ Պատահում է նույնիսկ, որ նրա առաջարկները պաշտպանում են հանձնաժողովներում ամենաթյուրահաղ աջակողմյանները։ Ժողովներում այդ մասին ոչինչ չասես, թե չէ նրան խաչ կհանեն, իսկ իմ կարծիքով, այս Դումայում նրանից լավ պատգամավոր մեզ դժվար էր տեսնալ, և կարելի է հուսալ, որ Կովկասի վերաբերյալ օրենքները չեն լինի ի վնաս հայերի։ Իսկ ինչ վերաբերում է նվաստիս՝ ես էլ շարունակ զբաղված եմ իրավաբանական պիտանի ու անպիտան գիտելիքներով⁶։ Բացի այդ, սկսել եմ տպել «Դավթիս» առաջին մասը։ Աշխատանքս հանձն առավ տպել Ակադեմիան իր հաշվով⁷։

Պետերբուրգում կյանք ու ոգևորություն՝ «արտաքին», գրեթե չկա։ Աչք է ընկնում հետաքրքիր մի երևույթ, հասարակության լավագույն գործող տարրերը ոչ այնքան հուսահատված են, որքան հուսախաբված։ Իմ կարծիքով, նրանք հուսախաբության էական պատճառը ոչ այնքան արտաքին անհաջողությունն է, որքան իրանց հոգեկան ներքին աշխարհը։ Կարծես, թե նրանք այլև չեն ընդունում իրանց նախահեղափոխական դավանանքի անարատությունն ու ճշմարտությունը... և այժմ կարկատում են իրանց հին Աստծուն։ Եվ հիրավի՝ Պետերբուրգի ինտելիգենտ տարրը—մանավանդ ուսանողությունը, աշխատում է, սովորում ու մտածում։ Հեղափոխությունն այժմ կատարվում է նրանց ուղեղների ու հոգեկան կյանքի խորքում։ Հակառակ սովորական ընդհանուր կարծիքին՝ ինձ թվում է, որ հեղափոխությունն այժմ Ռուսաստանում ոչ միայն չէ դադարել, այլ խորանում է, տարածվում ու դառնում սպառնական։ Ինձ մեծ վիշտ է պատճառում միայն մեր հայկական իրականությունը... առանց դավանանքի։ Ըստ երևույթին, մենք կարկատելու ու նորոգելու ոչինչ չունենք։

Գրիր, ինչ նորություններ կան Թիֆլիսում։ Լսել եմ, որ «Ժողովները» շարունակվում են «հին կարգով» և հիմնվում են «նոր» ընկերություններ ու «նոր» թերթեր։ Մենք էլ այստեղ հետ չենք մնում։ Ունենք բազում ընկերություններ, որոնց թագն ու պսակն է «Հայկական կուրքը»։

Անշնորհք ես շատ, շուտով մի հոբելյան սարքիր, փող կհավաքենք այստեղ։ Լուրջ եմ ասում, եթե որեւէ գրական կամ այլ ձեռնարկության համար փողի կարիք լինի՝ դիմիր և ինձ, թերևս կարողանամ օգտավետ լինել։ Թեև գրպաններս հույժ դատարկ են, սակայն ունեմ ծանոթներ «լիք գրպանների» շրջանում, որոնց կարելի է երբեմն դիմել։

Գրիր մանրամասն, ինչպես է «Վերնատան» հալը, ինչ եք անում այդտեղ, ինչով եք զբաղված և այլն, և այլն։

Ջերմ ողջույններս տիկնոջը և «գերդաստանիդ» և բոլոր հարցանողաց։

Համբույրները թո՛ւ «Սևուկիդ»⁸, Վարիան գրում է, որ աղջիկս⁹ նրա շափ է դառել. չեմ հավատում:

Քո Հակոբ Մանանդյան

Հ. Թումանյանի ֆոնդ, N 864: Ինքնագիր:

№ 4

Գրիգոր Խալաթյանցին

28 հունիսի 1911,

Րուսու

Մեծապատիվ պարոն,

Ձևր 14-ն հունիսի գրած բաց նամակը ստացել եմ¹:

Հունիսի 15-ին գրել եմ նամակ պրոֆ. Գիդուլյանովին² և հայտնել իմ համաձայնությունը ստանձնելու լազարյան ճեմարանի տեսչի պաշտոնը³: Պատասխան դեռևս չեմ ստացել: Նույն տեղի համար աշխատում են, ինչպես ևրեում է, նաև ուրիշները: «Раннее утро» թերթում տպված էր մի փոքր լուր Լևոն Սարգսյանի⁴ թելադրությամբ, որի մեջ իմ բանասեր ու լեզվաբան լինելը դիտմամբ չէր հիշված և միաժամանակ շեղված էր, որ մյուս թեկնածուն՝ Ս. Տեր-Ավետիքյանը⁵ հայտնի բանասեր է: Նույն բովանդակությամբ մի լուր տպված էր նաև «Մշակ» թերթում⁶:

Վաղը գնալու եմ ամառանոց: Եթե նամակ գրելու լինեք, խնդրեմ, գրեք հետևյալ հասցեով՝ Старый Майглис (Тифлисской губ.), Нижняя улица, дача Зотова, Якову Амазасповичу Манандяну.

Մոսկվայում և մանավանդ լազարյան ճեմարանում գործելու հնարավորությունն ու հեռանկարը ինձ համար ավելի ու ավելի գրավիչ է դառնում⁷: Պատրաստ ունեմ մի քանի գիտական աշխատություն մեր իմաստասիրական գրականության մասին, որ անմիջապես կհրատարակեմ⁸: Սկզբում իհարկե շատ դժվար կլինի վարել տեսչի ծանր պաշտոնը, սակայն ժամանակի ընթացքում հույս ունեմ, որ բոլոր խոչընդոտները և տեսչական գործունեության դժվարությունները կհարթվեն և կարելի կլինի զբաղվել նաև գիտական աշխատանքներով:

Ընդունեցեք շերմ ողջույններս:

Անկեղծ հարգանքով՝

Հ. Մանանդյան

Գր. Խալաթյանցի ֆոնդ, րածին V, № 470: Ինքնագիր:

№ 5

Հայերենի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության հանձնաժողով

15 փետրվարի, 1927

Երևան

Մեծարգո Արշակ Զոպանյան

Հայաստանի Ս. Ն. հանրապետության Լուսավորության ժողովրդական կոմիսարի¹ առաջարկությամբ Գիտության և Արվեստի ինստիտուտի² պատմա-հասարակագիտական և գեղարվեստական բաժիններին հանձնված է քննել հայերենի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխության խնդիրները: Հիշյալ բաժինները 1926 թ. հոկտեմբեր <երի> 17-ի միացյալ նիստում այդ նպատակի համար ընտրել են ինստիտուտի անդամներից մի հանձնաժողով³, թույլ տալով ուրիշներին ևս հրավիրել անդամակցության՝ վճռական ձայնի իրավունքով: Այդ հանձնաժողովն իր հերթին կազմելու է մի քանի ենթահանձնաժողովներ՝ քննելու համար հարցերը բազմակողմանի կերպով՝ թե լեզվաբանական, մանկավարժական, գեղարվեստական և թե

տեխնիկական տեսակետներով: Երեք լեզվաբան անդամները՝ Հր. Աճառյան, Գր. Ղափանցյան, Ա. Խաչատրյան¹ և Թիֆլիսից հրավիրված Ստ. Մալխասյանը միասին ներկայացրած լինելով իրենց առաջարկները, հանձնաժողովս որոշել է կազմել այդ առաջարկների համադրական աղյուսակը² և ներկայացնել ի քննության Հայաստանից դուրս գտնվող հայ և օտար ձեռնհաս անձերի³:

Ուղարկելով Ձեզ մի օրինակ հիշյալ աղյուսակից, խնդրում ենք հայտնել Ձեր կարծիքը:

Նախագահ հանձնաժողովի՝ Հ. Մանանդյան

Անդամ-քարտուղար՝ Հ. Աճառյան

Ա. Չոպանյանի ֆոնդ, րաժին 1, 133, № 4261: Մեքենագիր:

№ 6

Հովսեփ Կուսիկյանին

8 հունիսի, 1946
Երևան

Սիրելի՛ Յոսիֆ Կարպովիչ,

Շտապում եմ հայտնել, որ միշտակ ստացվել է այստեղ Մոսկվայից, այլևս կարիք չկա ուղարկել: Ձեզանից նամակ չեմ ստացել: Իմ հոգվածը՝ արդեն լույս է տեսել «Исторические записки» ժուռնալի 15-րդ համարում, բայց ես մինչև այժմ չեմ ստացել ո՛չ այդ համարը, ո՛չ էլ իմ հոգվածի արտատպությունները: Շուտով լույս կտեսնի իմ՝ համալսարանում կարդացած գեկուցումը². Կուղարկեմ Ձեզ:

Հուլյս ունեմ, որ առողջ եք:

Ձեր՝ Հ. Մանանդյան

Հ. Կուսիկյանի ֆոնդ, № 958ա: Ինքնագիր:

№ 7

27 օգոստոսի, 1946

Սիրելի՛ Յոսիֆ Կարպովիչ,

Ձեր նամակը ստացել եմ: Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը: Տեղեկություն ստացա, որ իմ գրքերն ուղարկված են Մինորսկուն¹: Ստացել եմ «Исторические записки» ժուռնալի բոլոր համարները:

Հուլիսի 27-ին Ակադեմիայից ստացել էի հեռագիր, որով հաղորդում էին ինձ, որ Ակադեմիայի նախագահությունը թույլատրել է կառուցել ինձ համար ամառանոց Երևանում և խնդրում էին ձեռնարկել տեղամասի խընդիրը և հայտնել իրենց, թե արդյոք հնարավոր չէ՞ շենքի կառուցումը հանձնարարել Երևանում տեղական շինարարական մարմիններին:

Այդ հեռագրին հուլիսի 27-ին հեռագրով պատասխանել էի ու խնդրել, որ Ակադեմիատրոյը հեռագրով ինձ հայտնե, թե արդյոք կարո՞ղ է նա շենքի կառուցումը հանձնարարել Վոյենստրոյին: Ես մանրամասն նրանց բացատրել էի նամակով, որ ցանկալի է շենքը կառուցել Երևանում, եթե կառուցումը հանձնարարվի Ակադեմիատրոյի կամ Գլավվոյենստրոյի կողմից Երևանի Վոյենստրոյին, որը պատասխանատու է լինելու Ակադեմիատրոյի առաջ շինարարության որակի և կառուցման ժամկետի նկատմամբ:

Հուլիսի 27-ի իմ հեռագրին ես պատասխան չստացա, ուստի օգոստոսի 5-ին ուղարկեցի նոր հեռագիր և հայտնեցի, որ եթե հնարավոր չէ շենքի կառուցումը հանձնարարել Վոյենստրոյին՝ ամառանոցը թող կառուցվի ինձ համար Զվենիգորոդի² մոտ Մոզժինկայում: Այդ հեռագրին ես պատասխան

չստացաւ և օգոստոսի 15-ին ուղարկեցի երրորդ հեռագիրը և խնդրեցի հայտնել, թե արդո՞ւք իմ երկու հեռագրերը ստացե՞լ են, թե ոչ: Մոսկվայի հեռագրատունը հաղորդել էր ինձ, որ հեռագրերը հանձնված են Մոսկվայում Ակադեմիկոսի հերթապահին (с дежурным): Իմ երրորդ հեռագրին ես պատասխան չունեմ¹:

Շատ կխնդրեմ, հարցնեք ու հայտնեք ինձ, թե ինչու չեն պատասխանում ու նաև իմանաք, թե որտեղ և երբ են շինելու ամառանոցը: Որքան ես տեսնում եմ, Երևանում հնարավոր չի լինի կառուցել շենքը, ուստի հայտնեցեք նորից իմ կողմից, որ շենքը շինեն ինձ համար Մոզժինկայում: Կարձու՞մ եմ, որ շենքը ինձ համար Մոսկվայի մոտակայքում կառուցելը միանգամայն նպատակահարմար է, որովհետև վերջերս իմ մալարիան ալստեղ սաստկացել է և ես հույս ունեմ, որ ամառները հանգստանալով Մոզժինկայում՝ կկարողանամ ձմեռները լավ աշխատել: Հույս ունեմ, որ Դուք ես զգալի չափով կկազդուրվեք ամառանոցում, որն ունենալու է վեց սենյակ:

Խնդրում եմ հատկապես նաև տեղեկանաք, թե երբ կարող եմ ստանալ շենքը:

Ես ուղարկել եմ Ձեզ Գառնիի մասին իմ աշխատությունը⁴. Երևի ստացել եք: Ընդունեցե՞ք իմ ու քոջս⁵ ու եղբորս⁶ ջերմ ողջույնները:

Ձեր՝ Հ. Մանանդյան

Հ. Կոսիկյանի ֆոնդ, № 928 Բ, Ինքնագիր:

ԵԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 1

1 Հ. Հ. Մանանդյանը Գեորգյան ճեմարանում աշխատանքի է անցել 1900 թ. հունվարին: Այդ սասին «Արարատ» ամսագրում տպագրվել է հետևյալ հաղորդումը. «1899 թ. դեկտեմբերի վերջերին Մայր Աթոռ ժամանեց Ժառանգավորաց ճեմարանի լսարանական բաժնի հունարենի ուսուցիչ պր. Հ. Մանանդյանը, որ իր ուսումնական արտասահմանում և կրթական քննություն տվել Ռուսաստանում: Պարոնը տոները հետևապես է արգեն իր դասերը» (տե՛ս Արարատ, 1900, № 1, էջ 22): Ա. Սիմոնյանն իր հուշերում («Սիրական Տիգրանյանի և իր ընկերների հիշատակին», տե՛ս Հայրենիք, Բոստոն, 1947, № 2, էջ 87) սխալմամբ գրում է, թե Հ. Մանանդյանը Գեորգյան ճեմարանում սկսել է աշխատել 1895 թ.: Սա ակնհայտ թյուրիմացություն է, քանի որ նա այդ ժամանակ դեռևս ուսանում էր Ընայի (Գերմանիա) համալսարանում:

2 Հ. Մանանդյանը շենքական իրավունք է ստացել նախ 1897 թ. Ընայի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետից (փիլիսոփայական դիտությունների դոկտորի), ապա 1898 թ.՝ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետից (հայ-պարսկական բանասիրության թեկնածուի):

3 Հ. Մանանդյանը դասավանդել է Գեորգյան ճեմարանի թե՛ լսարանական և թե՛ դասարանական բաժիններում: Դասարանական և լսարանական բաժիններում նա դասավանդել է հին հունարեն, լսարանական բաժնում՝ հին փիլիսոփայության պատմություն, հին հունական դրականության պատմություն, անդլիական դրականության պատմություն և գերմաներեն (Ա. Մանանդյան, Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի մահվան հնգամյա տարելիցի առթիվ, տե՛ս էջմիածին, 1957, № 2—3, էջ 64, հմմտ. նաև Ս. Չրչյան, էջմիածնի ճեմարանը, տե՛ս Պայքար տարեգիրք, Բոստոն, 1955, էջ 198—200):

4 Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Հ. Մանանդյանի նամակն ունեցել է իր որոշակի նշանակությունը, քանի որ նրա նախկին աշխատավարձը վերականգնվել է և նա շարունակել է պաշտոնավարել ճեմարանում (մինչև 1905 թ. սեպտեմբեր):

№ 2

1 Այսինքն՝ Դսեղ:

2 Հայտնի է, որ Հ. Թումանյանը 1904 թ. ընթացքում Լրկու անդամ էր այցելել էջմիածին՝ մայիսի 2-ից 5-ը և հունիսի 17-ից 22-ը: Հունիսի 24-ին Հ. Թումանյանն ու Հ. Մանանդյանը:

յանը այցելել են Անի, Հնավալորի այցելուների մատյանում թումանյանն արել է հետևյալ գրառումը՝

«Ես էլ եկա, տեսի ու ողբացի այս դավթարի վրա»:

2. Թումանյանի ստորագրության կողքին կա նաև Հ. Մանանդյանի ստորագրությունը (տե՛ս Արտաշես Վրույր, Անիում, Երևան, 1979, էջ 114):

3 «Վերնատուն»-գրական խմբակ, որը հիմնադրվել է 1899 թ. Թիֆլիսում, խմբակը, որի կազմի մեջ էին մտնում Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ա. Իսահակյանը, Լ. Շանթը, Դ. Դեմիրճյանը և Ն. Աղբալյանը, կաղամկերպում էր զեկուցումներ, դրական հանդիպումներ. մասնակցներ, ընթերցումներ «Վերնատուն» անդամների թիվը սահմանափակվում էր վերոնշյալ հիմնադիր վեց գրողներով: Մյուս գրողները (Պ. Պոռչյան, Ա. Ահարոնյան, Ա. Շիրվանզադե, Նար-Դոս, Մուրացան, Վ. Փափագյան, Լեո, Վ. Տերյան և ուրիշներ) մասնակցում էին դրական երեկոներին, սակայն «Վերնատուն» անդամ չէին: «Վերնատուն» հավաքույթներին մասնակցում էին նաև Կոմիտասը, Փ. Թերլեմեզյանը, Գ. Բաշինջաղյանը, Կ. Գալֆայանը և ուրիշներ: «Վերնատուն» ուներ իր մշտական հյուրերը, որոնց թվում Ն. Թումանյանը հիշատակում է սպասմարան Հակոբ Մանանդյանին իր կնոջ հետ» (Նվարդ Թումանյան, Հուշեր և գրույթներ, Երևան, 1987, էջ 14):

4 Նկատի ունի նշանավոր գրող, հրապարակախոս Դերենիկ Դեմիրճյանին (1877—1956):

5 Խոսքը հայտնի գրող, մանկավարժ Լ. Ս. Շանթի (1869—1951) մասին է:

6 Օլիան, որին ուղղված է հետգրությունը, Հ. Թումանյանի կինն է՝ Օլգա Թումանյան-Մանակյանը (1871—1971):

7 Այդ ժամանակ Հ. և Օ. Թումանյաններն ունեին ութ զավակ՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ, Արամվազ, Համլիկ, Անուշ, Արիիկ, Արեդ:

8 Վարդան Հ. Մանանդյանի կինն է՝ ուսուցչուհի Վարվառա (Վարդուհի) Թումանյանի Խանդավառի վ. Խանդավառյանը Հ. Թումանյանի տաղանդի երկրպագուներից էր: Բանաստեղծն ու երիտասարդ ուսուցչուհին կապված էին չերմ, անկեղծ բարեկամությամբ դեռևս 1900 թվականից: Նշելի է, որ Վ. Խանդավառյանն ու Հ. Մանանդյանն ամուսնացել են Հ. Թումանյանի խորհրդով (1904 թ.):

№ 3

1 Այդ ժամանակ Հ. Մանանդյանը բնակվում էր Պետերբուրգում, ուր նա տեղափոխվել էր 1908 թ. սկզբներին: Հ. Մանանդյանն ալստեղ պատրաստվում էր էքստենս թնություններ հանձնել Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

2 Հ. Մանանդյանի այս ցանկությունն իրականացավ 1912 թ., երբ Հ. Թումանյանը Պետերբուրգում, բանտից ազատվելուց հետո (մարտի 20-ին), մի քանի ազատ օր ուներ շրջելու զրախանութներում: Բանաստեղծը բուկինիստներից հինգ արկղ գիրք է գնում՝ մեծ մասը ժողովրդական էպոսին ու բանասիրությանը նվիրված: Թիֆլիս վերադառնալուց հետո նա հաճույքով պատմում էր. «Լավ առիթ՝ եղավ ինձ համար, բուկինիստներից բավականին լավ բաներ եմ հավաքել» (տե՛ս Նվարդ Թումանյան, նշվ. աշխ., էջ 98—99):

3 Խոսքը իրավաբան, հոգեբան, մանկավարժ, Պետական երկրորդ դոմայի (1907 թ.) պատգամավոր, հետագայում Հայաստանի հանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանի (1875—1947) մասին է:

4 Մանանդյանն ու Ս. Տիգրանյանը մտերիմներ ու անբաժան ընկերներ էին դեռևս Գևորգյան ճեմարանում պաշտոնավարելու տարիներից: Ահա թե ինչ է դրում նրանց հարաբերությունների մասին Ա. Սիմոնյանը. «Հ. Մանանդյանը շատ մոտ էր Սիրական Տիգրանյանի հետ, որովհետև միշտ նրա հետ էր ու ճեմարան կգային միշտ միասին, կարծես եղբու հարազատ եղբայրներ լինեին» (տե՛ս Ա. Սիմոնյան, նշվ. աշխ., Հայրենիք, 1947, № 4, էջ 98): Նույնը վկայում է նաև Հ. Աճառյանը՝ «Մենք երեքս՝ Մանանդյան, Տիգրանյան և Աճառյան, ոչ միայն իբրև ազատամիտ երիտասարդներ, այլև իբրև հայագիտության սիրահար անձներ, շատ մտերիմ ընկերներ դարձանք» (տե՛ս Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 215):

5 Ակնարկում է մանկավարժ, գրողատնտես, հետագայում Անդրկովկասում կաթնամթերքների արտադրության հայտնի մասնագետ Սարգիս Եսայու Աբովյանին (1869—1942): Ս. Աբովյանն ավարտել է Լայպցիգի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը և Շվեյցարիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի կաթնատնտեսական ֆերմաներում մասնագիտացել կաթի

մշակող, տեխնոլոգիայի դոկտ. Անդրկովկասում (Լոռի, Ախալքալաք) հիմնադրել է պանրի և վրոստի անհատական արտադրությունը:

5 **Խաղաթելյան**—խոսքը վերաբերում է Պետական երկրորդ և երրորդ դումաների պատգամալուր, կադետ Հ. Սաղաթելյանին (1863—1936): Հիշատակելի են աղբարային հարցերին նվիրված նրա ելույթները երկրորդ Պետական դումայում: Դրանք լի էին էսէռական կուսակցության աղբարային ծրագրի գաղափարներով և տողորված էին այն մտայնությամբ, որ գյուղացիությանը կարելի է փրկել գյուղական համայնքի միջոցով:

6 **Ակնարկում** է Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քննություններին իր նախապատրաստվելը: Հ. Մանանդյանն անհրաժեշտ քննությունները հանձնելուց հետո 1909 թ. հունիսին ստացել է իրավունքի թեկնածուի ատալին կարգի դիպլոմ:

7 **Քննությունների ակադեմիայի «Bibliotheca armeno-georgica» մատենաշարով** լույս է տեսել Հ. Մանանդյանի «Մեկնություն ստորոգությունների Արիստոտելի, ընծայելով էլիստի իմաստասիրի» երկասիրությունը (Ս. Պետերբուրգ, 1911, VIII—177 էջ):

8 **Սևուկը** Հ. Թումանյանի դուստր Թամար Թումանյանի (ծնվ. 1907 թ.) մականունն էր:

9 **Խոսքը** Հ. Մանանդյանի դստեր՝ Էլենոնորա (Նելլի) Մանանդյանի մասին է:

Մ 4

1 **Հասարակված** են սույն հարցի վերաբերյալ Հ. Մանանդյանին ուղղված Գր. Խաղաթյանցի նամակները (տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Մի քանի նամակներ ակադեմիկոս Հ. Մանանդյանի արխիվից: Բանբեր Հայաստանի արխիվների, 1974, № 1, էջ 43—50):

2 **Խոսքը Մոսկվայի համալսարանի եկեղեցական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, Լազարյան համարանի վերջին դիրեկտոր (1911—1917) Պավել Վասիլևիչ Գիդուլյանովի մասին է:**

3 **Խաղաթյան համարանի տեսուչ, պաշտոնակա Սահակ Թանդյանի հրաժարականից հետո** (այսինքն, 1911 թ.) տեսչի պաշտոնը մնացել էր թափուր:

4 **Նկատի ունի մանկավարժ, հրատարակիչ, հասարակական գործիչ, «Մուրճ» ամսագրի խմբագիր Լևոն Սարգսյանին (1862—1926): Լ. Սարգսյանը ավարտել է Լազարյան համարանի բնագիտական դասընթացը (1884 թ.) և Մոսկվայի համալսարանի բնագիտական բաժանմունքը (1889 թ.):**

5 **Ս. Տեր-Ավետիսյան**—խոսքը մանկավարժ, պատմաբան, հնագետ Ս. Վ. Տեր-Ավետիսյանի (1875—1943) մասին է: Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1904 թ.), մասնակցել Անիում, Գարսում, Դվինում, Արմավիրում, Նախիջևանում, Վանում և այլուր կատարված հնագիտական ուղիորդումներին: Հետագայում՝ ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի հնագիտության սեկտորի և Երևանի համալսարանի հնագիտության ամբիոնի վարիչ:

6 **Մշակի 1911 թ. համարներում** այդ մասին որևէ նյութ մեղ չհաջողվեց հայտնաբերել:

7 **Այդ ժամանակ** Հ. Մանանդյանը, իրեն երդվելով հավատարմատարի օգնական, Բաքվում գրադվում էր փաստաբանական գործունեությամբ, ինչպես խոստովանում է նա՝ «ստիպված», Բաքի խնդրի պատճառով: Պ. Վ. Գիդուլյանովին ուղղված սեպտեմբերի 10-ի թվակիր նամակով նա հայտնում է, որ ինքը «երկար տարիների ընթացքում հատուկ պատրաստվել է գիտական գործունեության համար» (տե՛ս Մ. Մալոնոցի անվան Մատենադարանի արխիվային բաժին, ակադ. Հ. Մանանդյանի ֆոնդ, թղթ. 227, վավ. 319ա):

8 **Մատենադարանի արխիվային բաժնում գտնվող** Հ. Մանանդյանի թողածի որոշ նյութեր վկայում են, որ նույն շրջանում նա զբաղված էր հունարան դպրոցի երկասիրությունների ուսումնասիրությամբ: Այդ աշխատանքն ավարտվեց 20-ական թվականների սկզբներին և ամփոփվեց մի ծավալուն մենագրության մեջ (տե՛ս Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա դարգացման շրջանները, Վիեննա, 1928, 299 էջ):

Մ 5

1 **Այդ ժամանակ ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարն** էր խորհրդային պետական և կուսակցական նշանավոր գործիչ Ասքանաղ Մոսվյանը (1885—1929):

2 **Գիտություն** և արվեստի ինստիտուտը, որը Հայաստանի առաջին խոշոր գիտական կենտրոնն էր, հիմնադրվել է 1925 թ. հունվարին:

3 **Հանձնաժողովի կազմի մեջ էին մտնում** Հ. Մանանդյանը (նախագահ), Հ. Աճառյանը (քարտուղար), Մ. Արեղյանը, Ստ. Մալխասյանցը, Աս. Խաչատրյանը, Թ. Ավդալբեգյանը, Լևոն, Գր. Ղափանցյանը, Գ. Լևոնյանը, Ալ. Շիրվանզադեն և ուրիշներ:

4 Խոսքը Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Աստվածատուր Խաչատրյանի (1862—1938) մասին է:

5 Հանձնաժողովի կազմած համադրական աղյուսակը տե՛ս Տեղեկագիր ՀՍԽՂ Գիտության և արվեստի ինստիտուտի հայոց լեզվի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխման հանձնաժողովի, Երևան, 1927, էջ 94—96:

6 Համադրական աղյուսակը, որ ուղարկվել է Երևանից ղուրս դոնվոդ բոլոր նշանավոր մասնագետներին, մեծ հետաքրքրությամբ քննվեց արտասահմանի հայագիտական հաստատություններում և անհատ հայագետների կողմից: Այս առումով հատկանշական է հայերենի ուղղագրության և տառերի վայելչության վերաբերյալ Ն. Ազոնցի ակնարկը, որը հրատարակել է պրոֆ. Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 4, էջ 157—168):

№ 6

1 Նկատի ունի իր «Проблема общественного строя доаршакидской Армении» հոդվածը (տե՛ս Исторические записки, М., 1945, № 15, с. 3—28, նաև՝ Հ. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ., Երևան, 1981, էջ 448—482):

2 Ակնարկում է 1946 թ. ապրիլի 22-ին համալսարանի դիտական նստաշրջանի պլենար նիստում իր կարդացած «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» դեկուցումը, որը լույս է տեսել նաև առանձին գրքով (Երևան, 1946, 59 էջ):

№ 7

1 Ռուս նշանավոր արևելագետ Վ. Յ. Մինորսկին (1877—1966) ավարտել է լադարյան ձևաբանը (1903 թ.), պաշտոնավարել Իրանի և Թուրքիայի ռուսական դեսպանություններում, 1919 թվականից ապրել է արտասահմանում. 1937 թվականից լոնդոնի համալսարանի պրոֆեսոր:

2 Զվենիգորոդ—քաղաք Մոսկվայից արևմուտք՝ 60 կմ հեռավորության վրա: Հայտնի է իր հանգստյան տներով և առողջարաններով:

3 Հ. Մանանդյանին ուղղված Հ. Կուսիկյանի 1946 թ. սեպտեմբերի 13-ի նամակից պարզվում է, որ Ակադեմիատրոյի համապատասխան բաժինը ստանալով սույն հեռագրերը, Հ. Մանանդյանին հեռագրել է՝ За Вами утвержден участок в Мозжинкине (տե՛ս Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հ. Կուսիկյանի ֆոնդ, 487, № 7):

4 Տե՛ս № 6, ծան. 2:

5 Խոսքը քրոջ՝ Աստղիկ Մանանդյանի մասին է:

6 Խոսքը կրտսեր եղբոր՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, ինժեներ Արսեն Մանանդյանի (1879—1961) մասին է: